ԺԱ ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՄԱՐՏ 1906 — ՎԱՐՆԱ — 19 ԹԻՒ

ԳԱՆՁՄԱՆԴ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 Ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւը մէկ ծրարով
Տարեկան . . . 14 Ֆր.
Վեցամսեայ. . . 7 Ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60 Տոլար
Վեցամսեայ 1. 50 »

ԿԱՆԽԻԿ

Մանուշակեան սողը
20 սանթիմ

ԻՐԱՒՈՒՆՔ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍԷ Ի

Rédaction du journal
„Iravounk"
VARNA (Bulgarie)

Редакция
на вѣстникъ
„Иравунк"
ВАРНА

Գրութիւնք եւ լեռ
տրուիր

ՅԱԿՈԲ Կ. ՀԱՃԻ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Կը վաճառէ Սոֆիա քաղաքի վիճակահանութեան տոմսերը.

Գին՝ 1/4ը 3 ֆր. 1/8ը 1,50

ՀՐԱՊԱՐԱԿԱԳԻՐՆԵՐԸ

Մամուլը կամ մամլոյ ոեւէ մէկ ներկայացուցիչը եթէ կուզէ մէկու մը կամ դասակարգի մը հաճոյակատար ըլլալ և հանրային հանգամանք ունեցող խնդիրներու ու գործերու մէջ աչառութիւն ընել, պարզապէս իր կոչումին դաւաճանած կը լինի և «պնակալէզ» տիտղոսին կարժանանայ. այս պարզէ, և ամեն ոք գիտէ թէ գէշին լաւ եւ սեւին ճերմակ ըսող խմբագիրը կամ թերթը ի՛նչ արժէք ունի։

Իսկ մենք սա կարծիքէն ենք թէ նոյնչափ պնակալէզ և հաւասարապէս իր կոչումին դաւաճանող է այն թերթը կամ հրապարակագիրը որ խօսելու տեղ կը լռէ, գէշը ցոյց չտալու եւ վատը չը մատնանշելու համար, սա տափակ մտահոգութեամբ որ մէկուն գէշ չերևայ, կամ լռութեան վարձք մը ընդունի։

Նոյնպէս հրապարակագրի կոչումին դաւաճանողներ և պնակալէզներ են այն՝ թերթերը ու հրապարակագիրները որոնք մէկ խումբի կամ դասակարգի մը հաճոյք պատճառելու համար անհատի մը պատուոյն հետ խաղալու կամ տկարներ կոխոտելու չեն խղճահարիր։

Նոյն ստոր տիպարները կը ներկայացնեն ամէն անոնք, որոնք գրիչ ձեռք կառնեն միայն իրենց կիրքին գոհացում տալու կամ անարժան մը գովելու և արժանաւոր մը պարսաւելու նպատակաւ։ Սա մեր խմբագրական կեանքին մէջ այս տեսակներէն հարիւրաւորներու հանդիպեր ենք. անոնք սովորաբար անխիղճներ են, կամ իրենց դատողութեան նժարին հաւասարակշռութիւնը կորսնցուցած թերթեներ՝ որոնք միշտ իրենց «յետին մտքերը» ունին։ Բայց խեղճերը չեն կրնար այդ մտքերը պարտկել փորձառու խմբագրապետի մը թափանցող տեսութենէն։ Քանի մը ամիս առաջ վարժապետ մը մեզ կը ներկայանար երկար յօդուածով մը, որով դերասան Գալֆաեանը կը քննադատէր խստիւ Համլէթի դերին մէջ. եւ չէր ամչնար սակայն վերջին տողերով գովասանական խօսքեր ընելու թագաւորին և թագուհիին դերը կատարող մարդ արձաններու մասին, որոնք, կարծես թէ, միայն Գալֆաեանին շինածը աւելու համար բեմ ելած էին։ Մենք չնչեցինք այդ վերջին տողերը զորս խմբակի մը հաճոյակատար ըլլալու նպատակաւ գրած էր խեղճուկ վարժապետը։ Քանի մը շաբաթ առաջ ալ Պատուելի մը կը բերէր մեզ յօդուած մը մեր ազգային վարժարանները ու հոգաբարձուները քննադատող, և սակայն կը մատնուէր թէ այն յօդուածը գրած ատեն իրեն նպատակ ունեցած էր, ոչ թէ անաչառ քննադատութիւն, այլ իր մասնաւոր վարժարանին համար ռէքլամ ընել, ազգային վարժարանները պարսաւելու գնով։

Եւ շատեր կան այս տեսակ, որոնց բոլորն ալ մամուլը իրենց կիրքին և շահուն գործիք ընել ձգտող կեղծ ազգասէրներ կամ պընակալէզներ են, և որոնք իրենց անձնական շահուն կամ կիրքին համար մամլոյ բարձր կոչումին դէմ դաւաճանելով, կը փորձեն թունաւորել հանրութեան միտքը ու կարծիքը։

Պարկեշտ մամուլի վարիչները պէտք է իսպառ վտարեն այդ տեսակ «յետին մտքերով» գրող կեղծ հրապարակագիրներ և աչխատակիցներ, որպէսզի կարելի ըլլայ մամուլը իր բարոյական բարձրութեան վրայ պահել։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅ-ԹՈՒՐՔ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Մեր նախորդ թուով ծանօթացուցինք մեր ընթերցողներուն հայկական եւ թրքական երկու ծրագիրները։ Այդ ծրագիրներու իւրաքանչիւր յօդուածը համաժողովին քննութեանը ենթարկուեցաւ։

Թուրք ներկայացուցիչները Կովկասի հայ թրքական ընդհարումներու պատճառ ցոյց տուին Հ. Յ. Դաշնակցութիւնը եւ պահանջեցին այս կազմակերպութեան լուծումը, որպէսզի կարելի ըլլայ հաշտութիւն կայացընել։ Հայ ներկայացուցիչները հերքեցին այդ ամբաստանութիւնը եւ ցոյց տուին թէ հայ յեղ. կազմակերպութիւնները նախայարձակ եղող թուրքերուն դէմ միայն ինքնապաշտպան գտնուած են։

Թուրքերը Դաշնակցականներու ՅԱՌԱՋ թերթէն քանի մը հատուածներ կարդալով, ջանացին փաստել թէ այս տեսակ գրուածներ երկու ազգերը իրարու դէմ գրգռելու կը ծառայեն, ուստի պէտք է գրաքննութեան ենթարկել այդ թերթը։ Հայ ներկայացուցիչները անկարող գտնուեցան Յառաջին գրածները պաշտպանել, եւ հարկադրուեցան միաձայնութեամբ յայտարարել թէ իրենք համակարծիք չեն Յառաջին։ Այս յայտարարութիւնը աստիճան մը գոհացուց թուրքերը. սակայն հայերը առիթէն չօգտուեցան իրենք ալ մատնանշելու թուրք թերթերու կարգ մը գրութիւնները, որոնք ռամիկ թուրք ամբոխը եւ նոյնիսկ ռուսները հայոց դէմ գրգռելու նպատակաւ գրուածներ են։

Նահանգային ու գաւառային վարչութեանց եւ ոստիկանութեան վերակազմութեան համար Հայոց գրած պահանջին թուրքերը շատ չկրցան հակառակիլ, եւ հետեւապէս ընդունեցին։ Նոյնպէս հայերն ալ առանց առարկութեան ընդունեցին տարրական ուսումը պարտաւորիչ ընելու առաջարկը։

Երկու կողմերէն ներկայացուած ծրագիրներուն առաջին չորս յօդուածները գրեթէ նոյնութեամբ ընդունուելէ յետոյ, կէօչի խնդրոյն մէջ վիճաբանութիւնը շատ երկար տեւեց։ Հայերը քիչ մը թաքթիքայի պակասով երկու կերպ առաջարկութիւններ ըրին. հայ մը ըսաւ թէ պէտք է «կէօչի» սովորութիւնը ջնջել եւ արգիլել այս տարի. ուրիշ հայ մը առաջարկեց փոխանակ 30–40 ճամբաներով կէօչ ընելու միայն 5–6 ճանապարհէ անցնին, որպէսզի կարելի ըլլայ կառավարութեան յրջօրէն հրամայողութիւն կատարել եւ ընդհարումներու առջեւն առնել։ Այս կարեւոր խնդիրը մէկէ աւելի նիստեր գրաւեց եւ սա եզրակացութեան յանգեցաւ ըստ առաջարկութեան նախագահին. 1) Կէօչի սովորութիւնը չարգիլել, 2) ցանկալի է որ թուրք ժողովուրդը թափառաշրջիկ կեանքէ դադրի եւ 3) կէօչի մասին ձեռք առնուելիք միջոցները կառավարութեան թողուլ, մասնակցութեամբ բնակչութեան ներկայացուցիչներուն։

Երկու կողմի ոճրագործները յանձնելու մասին թուրքերու պահանջը մերժուեցաւ։ Հայերէ եւ ցոյց տրուեցաւ թէ այդ կառավարութեան գործն է։ Թուրքերը հարկ տեսան որ յանցաւորը գտնելու մասին ժողովուրդն ալ կառավարութեան աջակցի։ Հայերը առարկեցին թէ օրէնքը արդէն այդ պարտքը կը դնէ ժողովրդին վրայ, ուստի հարկ չկայ հոս իր պայմանագրիլ։ Թուրքերուն այս պահանջին նպատակն է հայ ժողովուրդը պարտաւորեցնել հայ յեղափոխականները կառավարութեան յանձնելու։

Նախագահը գոցեց այդ խնդրոյ վիճաբանութիւնը, յայտարարելով թէ «պետութիւնը չի թոյլատրեր ոեւէ զինեալ կազմակերպութիւններ, ինչ նպատակ ալ ունենան անոնք։ Յանցաւորները յանձնելու միտքը ճիշդ է եթէ ոչ յանցաւորները համոզուած կըլլան թէ անպատիժ կը մնան։ Վնասուածներու ընտանիքներու վարձատրութիւնը կառավարութիւնը հիմակուց գործնականապէս իրականացնելու վրայ է, եւ այս մասին նահանգային յանձնախումբերը դեռ կը զբաղին. »ըսաւ ու նիստը գոցեց։

Հայ ներկայացուցիչներու ծրագրին 7 րդ յօդուածը թունդ հանեց թուրքերու սիրտերը։ Անով հայերը կը պահանջէին գիւղերու եւ ազգքներու վնասները։ Թուրք պատուիրակներէն շատերը մեղմակից ըլլալով հրդեհումներու եւ բաժնեկից կողոպուտներու, սրտատրոփ սկսան բաներ մը կակազել եւ ըսել թէ չենք կրնար կողոպտողները գտնել, ասկէ վերջ եթէ կողոպտումներ պատահին, դատարանով թող պահանջուի, բայց ասկէ առաջ եղածի մասին ոչինչ չէ կարելի ընել, կամ շատ շատ վնասուողը դատարանի թող դիմէ։

Թուրքերու այս պատիպատ առարկութիւններուն պատշաճ պատասխաններ արուեցան հայերու կողմէ, եւ Խատիսեան յայտարարեց թէ եթէ վնասը չը հատուցուի խանչարը կը խօսի. Թուրք պատուիրակ Զիաթխա-

նով եւս պատասխանելով ըսաւ եթէ կողոպուտէն պարպուածը լեցնել ուզէք նոյնպէս խանչարը կը խօսի, մենք ալ կը պահանջենք որ զինեալ կազմակերպութիւնները լուծուին որ հանգստութիւնը տիրէ։ Հայերը միշտ պնդեցին իրենց պահանջին վրայ թէ պէտք է որ վնասները հատուցուին, եւ այս գործը կատարուի ոչ թէ դատարանով, այլ կառավարութեան կամ ատմինստրացիայի կարգով, որպէսզի տարիներ չը տեւէ եւ չուտափոյթ իրագործուի. Թուրք պատուիրակները այս կէտէն ալ աւելի խրտչեցան, որովհետեւ երբ խուզարկութիւններ կատարուին իրենց շատերու տունեբէն պիտի ելլեն հայերէ յափշտակուած կողոպուտները։ Վերջապէս Թուրքերը ըսին «Մենք չենք կարող վնասներու հատուցման գնով գնել խաղաղութիւնը։ Հայերը յայտարարեցին «Մինչեւ որ հատուցումը չը լինի հաշտութիւնը անկարելի է։»

Նախագահը խնդիրը սպառած համարելով ըսաւ, ուրեմն Հայերը կուզեն վնասներուն չուտափոյթ վերադարձը, եւ Թուրքերը կ'առաջարկեն դատարանի գիմել։ Եւ հարցը գոցեց։

Մ. ՌՈՒԶՎԷԼԹԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ամերիկայի արտաքին գործոց նախարարը հետեւեալ նամակը ուղղած է Մ. Ճէյմս Վ. Բէյնհոլտի, որ նախագահ Ռուզվէլթին մատուցած էր Մ. Պէռքլոք խմբագրուած եւ Եւրոպացի նշանաւոր հայասէրներէ ստորագրուած նամակը.

Վաշինկթոն 25 յունվ. 1906

(Արտաք. պաշտօնատուն)

Տիար

Նախագահը մեր պաշտօնաքանին յանձնած է ձեր ընթացիկ ամսոյ 16 թուակիր նամակը, որուն կից մատուցուած էր խնդրագիր մը ստորագրուած Ֆռանսայի, Իտալիոյ, Պելճիգայի, Շուէտի, Տանիմարքայի, Մեծն-Բրիտանիոյ, Հոլանտայի, Գերմանիոյ և Աւստրո—Հունգարիոյ ազդեցիկ ներկայացուցիչներէն, կոչ ընելով Նախագահին որ կանխարգել միջոցներ ձեռք առնէ այն անգթութեանց դէմ որոնցմով կը տառապին Թուրքիոյ հպատակ Հայերը։

Ստորագրողներու բարձր դիրքը պիտի տար, եթէ կարելի էր, ալ աւելի շահեկանութիւն այս խնդրոյն որ շատ տարիներէ ի վեր գրաւած է Նախագահին ամենալուրջ ուշադրութիւնը։

Բոլոր հարստահարուած երկիրներու համար Ամերիկացւոց համակրանքը շատ անգամներ արտայայտուած է մեր կառավարութեան զանազան մասնաճիւղերուն կողմէ և տարաբաղդ Հայերու խնդրոյն առթիւ ալ ճարտասանօրէն արտայայտուած է նոյն ինքն Ամերիկացիներէ։ Ոչ մէկ տեղ մէկը չը կասկածիր թէ Նախագահը կը բաղձայ որ Հայերը ապահովութիւն ստանան իրենց կեանքին և ինչքին համար. ապահովութիւն զոր եւրոպական պետութիւնք համաձայնած են անոնց երաշխաւորել։

Թուրքիոյ հայ հպատակներու տառապանքները բարձրաձայն օգնութիւն և դարման կաղաղակեն։ Անոնք ամբողջ մարդկութեան մարդկային զգացումը կը վիրաւորեն և բոլոր աշխարհը համաձայն է ողբալու և դատապարտելու համար հակառակորդութիւնը ազգերու որոնք իրարու վրայ յարձակիլ տուին Թուրքիոյ բնակչութեան ներհակ տարրերը։ Արդարադատ մարդիկ չեն կըրնար հանդիսատես ըլլալ այդ տեսակ կռիւներու առանց բաղձալու կարողութիւնն ունենալ պատնոնց տալիւը առնելու։

Կը մաղթեմ անկեղծօրէն որ Միացեալ—Նահանգները ունենային այդ կարողութիւնը. բայց հաւասար անկեղծութեամբ մը համոզուած եմ թէ եղած ջանքերը Միացեալ—Նահանգներու կողմէ, ի հարկէ օրինական և ուժեղ միջամտութիւն ըլլալէ հեռի, քիչ կամ ոչինչ արդիւնք պիտի ունենան, եւ մասնակցելով պարսաւանքի մը ուրիշ ազգերու գործերուն և վարմունքներուն, չպիտի առաջ բերեն մեծ բարիք այն դժբաղդ արարածներուն որոնց աղէկութիւն ընել կը փափաքին։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅԵՐԸ

Ամերիկահայոց Առաջնորդ Տ. Յովսէփ արքեպ. Սարաճեանի դէմ տեղական թերթերէ մէկ քանիին խիստ յարձակումներէն զատ, հետեւեալ նամակն ալ կուգայ հաստատել թէ ժողովուրդն ալ այլևս դադրած է համակրանք տածելէ։

Տէր խմբագիր

Մենք ի ներքոյ ստորագրեալներս յանուն հայ եկեղեցւոյ եւ ազգային շահերուն կը բողոքենք Սարաճեան Յովսէփ արքեպիսկոպոսին Ամերիկայի Հայոցս ընդհանուր առաջնորդական պաշտօնին դէմ։

Ա. Նկատելով որ ըստ հայկական Սահմանադրական օրէնքի Սարաճեան Սրբազանը Ամերիկայի հայոցս ընդհանուր քուէովը ընտրուած չէ։

Բ. Նկատելով որ իւր մտաւոր անկարողութեամբ անյարմար է Ամերիկայի պէս կարեւոր թեմի մը։

Գ. Նկատելով որ իւր հոգեւոր գործը թերի ու կիսկատար ձգելով մէկտեղ, օտարներու առջեւ հայ Եկեղեցւոյ հեղինակաւոր ներկայացուցիչ մը ըլլալու անկարող է։

Դ. Նկատելով որ իւր պաշտօնի կոչումով պէտք էր սէր եւ միաբանութիւն քարոզել, աւելի քէն, կռիւ ու ոխ կը սերմանէ, եւ իւր աթոռի հաստատութիւնը բաժանումի եւ երկպառակութեանց մէջ կը փնտռէ։

Ե. Նկատելով որ համախոհներ միշտ ընտրած է ստրուկ եւ մտային կարողութեամբ փճացածներ, եւ միշտ ատած ու անարգած է հայութեան թարմ ուժերը։

Զ. Նկատելով որ հայ գործաւոր դասակարգին ձայնին եւ բողոքին միտ եւ կարեւորութիւն չի տալով, միշտ զրկած է հոգեւոր մխիթարութիւնէ։

Է. Նկատելով որ այս օտարութեան մէջ իւր հոգեկան մխիթարութեանց եւ եկեղեցիին մեզ «սիրցնել տալու տեղ անոր սուրբ բեմէն ներեցէք զմիմեանս»ի տեղ «ատեցէք զմիմեանս» քարոզած է։

Ը. Եւ վերջապէս նկատելով որ իւր մտային կարողութեամբ ու ընդհանուր հովիւի մը հոգեւոր կոչումին անյարմար, եւ Ամերիկահայ գաղութը հովուելու անկարող է՝ կը բողոքենք մենք Լոէլարնակ հայերս, եւ թախանձագին կը խնդրենք մեր ալեզարդ Վեհափառ Հայրիկին ուշադրութիւնը։

Տէր խմբագիր սոյն բողոքագրէն զրկուած է բոլոր արտասահմանեան

«ԻՐԱՒՈՒՆՔ»Ի ԹԵՐԹՈՆԸ

ԿԱՐՄԻՐ ԾԻԾԱՂ

(Շար. նախորդ թիւէն)

ՀԱՏՈՒԱԾ Ե.

Եւ ահա նրանք սկսան կրակել, ու մենք միաժամանակ չէինք հասկանում թէ դա ինչ էր նշանակում եւ շարունակում մեր ուրախութիւնն ու ծիծաղը։ Ուրախ էինք եւ ծիծաղում, երբ տեղատարափ անձրեւի նման մեր վրայ թափւում էին գնդակներ ու հրազնդեր եւ մի հարուածից հարիւրաւոր մարդկանց խլում մեզանից։ Մէկը բացագանչեց—եւ ես դա լաւ յիշում—եւ մենք դրա վրայ կարծես քնից զարթնած տեսանք որ մեր գործը թշնամիին հետ էր, որ նրանք իրանց համազգ՝ ստնոնրով էին եւ ոչ մեր եւ անմիջապէս ըսկսեցինք կրակել։ Այս տարօրինակ կռիւը սկսուելուց գրեթէ տասն եւ հինգ բոպէանց իմ սրունքների երկուսըն էլ ջախջախուեցան եւ ես ուշքի եկայ միայն հիւանդանոցում, անդամահատուելից յետոյ։

Հարցրի կռուի ինչպէս վերջանալը եւ ստանալով խուսափողական պատասխաններ, հասկցայ որ յաղթուողը մենք ենք եղած։

Որովհետեւ սրունքներս կորցրել էի, պէտք էր ինձ ետ ուղարկել, սա ուրախութեամբ լցրեց ինձ, ինչպէս եւ այն, որ ես ողջ եմ—ողջ երկար ժամանակով—ողջ ընդմիշտ։

Մի շաբաթից յետոյ միայն կարելի եղաւ ինձ ծանօթանալ մանրամասնութեանց հետ, որոնք իմ ամբողջ էութիւնը լցրին վախով եւ չը լսուած սարսափով։ Այո՛, հասկցայ վերջապէս որ նրանք մեր մարդիկն են եղել, որ սրունքներս ջախջախողը եղել էր մեր ռումբերից մինը. արձակած մեր մարդերէ մինը մեր թնդանօթներէ մէկից։ Ի՞նչպէս եւ ի՞նչու պատահեց այդ դէպքը ո՛չ ոք կարող եղաւ բացատրել։

Մեր բժիշկը. ինձ անդամահատողը մի ջորացած կմախք դարձած ծերուկ, ապականուած ծխախոտի ծխով եւ Ասիտֆէնիքով ալեխառն պեխերի արանքից մի մշտական ծիծաղով ինձ ժամեցաւ ասելով։

«Բաղդաւոր ես որ դուն ես գնալու։ Այստեղ մի ինչ որ չարիք է սպասում»։

«Ի՞նչ չարիք։»

«Այո՛, մեզ մի չարիք է սպասում հառաչեց նա, եւ դէմքը խոժեռելով ու ծխախոտի ծուխի մէջ թաղուելով, «Երանի թէ ես էլ կարողանայի հեռանալ այստեղից», յարեց։

Յետոյ ծռելով, նա իրա ծխապատ պեխերի արանքից փսփսաց։

«Պիտի գայ ժամանակ երբ այստեղից ոչ ոք պիտի կարողանայ հեռանալ։

Այո՛, ոչ ես եւ ո՛չ էլ ո եւ է մէկը»։ Նկատելով իրա աչքերի մթեւնոյն լարուած եւ ապուշ արտայայտութիւնը մի անտանելի սարսափ սրացաւ իմ գլխում, կարծես հազարաւոր չէնքեր կործանւում էին եւ թափւում նրա վրայ եւ բոլորովին սառած փսփսացի։

«Կարմիր Ծիծաղը»։

Նա առաջինն էր, որ հասկցաւ ինձ եւ շտապով գլուխը շարժելով կրկնեց։

«Այո՛, Կարմիր Ծիծաղը»։

Նա նստաւ իմ կողքին եւ մի գաղտագողի ակնարկ նետելով շուրջը, սկսաւ իրա ալեւոր միրուքը շարժելով արագ արագ փսփսալ։

«Բժիշկ, դու խելքի ես»։

«Ո՛չ աւելի, քան դո՛ւ ես։ Կրկնում եմ, ոչ աւելի, քան դու ես»։

Նա շփեց իրա նիհար ծեր սրունքը, ծիծաղեց, եւ յետոյ իրա ուսերի վերեւից ինձ նայելով, զարհուրելի ծիծաղը դեռ իրա խանձած շրթների վրայ, քանիցս աչքով արեց, այնպէս ճարտարօրէն, որ կարծես մենք երկուսս իմանում էինք մի զարմանալի բան, որը ուրիշ ո՛չ ոքի էր ծանօթ։ Յետոյ ստանալով մի վեհ եւ հանդիսաւոր դիրք, ինչպէս մի ձեռնածու բոցիէսէօր իրա պիրֆիրմէնսում, նա աստիճանաբար բարձրացրեց իրա բազուկը եւ հետզհետէ խոնարհեցնելով երկու մատները դպցրեց ուշադրութեամբ վերմակին այն մասին, որի տակ իմ սրունքներն էին լինելու, եթէ կտրուած չը լինէին։

«Եւ դու հասկանում ես այո՞» հարցրեց նա խորհրդաւոր կերպով։

Յետոյ միեւնոյն մեծաշուք եւ խորհրդաւոր դիրքով նա պարզեց իրա ձեռքը դէպի անկողինների շարքը, որոնց վրայ պառկել էին վիրաւորները, կըրկնելով։

«Դու հասկանում ես եւ այս՞»

«Վիրաւորները», հարցրի ես, «վիրաւորները»։

«Վիրաւորները», կրկնեց նա որպէս արձագանք, «վիրաւորները, առանց սրունքների եւ առանց թեւերի, ծակուած կողերով, ջախջախուած ուներս խրուած կուրծքերով ու դուրս պոկուած աչքերով։ Հասկանում ես նրանց։ Շատ ուրախ եմ։ Հետեւաբար գուցէ կարողանաս հասկնալ այս։»

Իրա տարիքից բոլորովին անսպասելի թեթեւութեամբ, նա վար նետուեց եւ կանգնեց իրա թաթերի վրայ, ոտքերը հաւասարակշռեց օդի մէջ, գործի սպիտակ շորերը վար ծալլուեցին, դէմքը պառաւ ծիրանեգոյն եւ օտարի վեր դառած հայեացքը ինձ լաւ լսելով, դժուարութեամբ դուրս տուեց մի քանի կոտրատուած բառեր։

«Հասկանում-ես-եւ-այս՞։

«Վե՛րջ տուր», փսփսացի սարսափած, «ապա թէ ոչ կը պոռամ»։

Նա ստացաւ բնական կեցուածք, եկաւ նստեց իմ կողքին եւ շունչ առնելով նկատեց։

Հայ թերթերուն ինչպէս նաեւ Ռուսաստանի թերթերուն։

(134 ստորագրութիւններ)

1906 մարտ 8 Լօէլ

Ամերիկայ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տէր խմբագիր

Ցանուն արդարութեան եւ յեղափոխութեան պատոյն հաճեցէք հրատարակել ներկայ երկտողս.

Ստորագրեալս բնիկ Մշեցի՝ կուգամ բոլոր հայութեան ծանօթացնել Մեսրոպ Վարժապետեան անուանեալ կեղծ յեղափոխականին գարշելի արարքը, որպէսզի ժողովուրդը զգուշանայ այդ հրէշէն։

Այդ Մեսրոպը բնիկ Մշեցի եւ իմ մօրաքրոջս որդին ըլլալով, թէ Վառնա եւ թէ Պուրկազ օտարութեան մէջ. երբ վէրքերով եւ հիւանդութիւններով վարակուած Թշուառ վիճակ մը ունէր. զինք խնամած եմ տանս մէջ, եւ ինք իբր ազգական եւ իբր հայրենակից ինձմէ գտած բարիքին եւ վէրքերուն դարմանումիս համար ցմահ երախտապարտ լինելը միշտ խոստովանած ըլլալով զիս «հայր» եւ կինս «քոյր եւ մայր» կը կոչէր։ Այս իրողութիւն մըն է որ ամբողջ Վառնայի եւ Պուրկազի մէջ գտնուող Մշեցւոց եւ այլոց ծանօթ է։

Դաշնակցական կոմիտէէ մը իբր յեղափոխական ձեռքը թուղթեր ունեցող այդ լիրբը անցեալ սմառ իմ Պոլիս ճամբորդելէս օգտուելով, Պուրկազի մէջ կը սկսի աւելի ստէպ յաճախել իմ տունը, եւ վերջապէս բացակայութեամբս կը յաջողի համոզել իմ կինս, որպէսզի տանս բոլոր կարասիքը, չապիկներս իսկ, ծախելով, միատեղ փախչին եւ իբր այր եւ կին ապրին իրարու հետ։

Այդ դաշնակցականի դիմակին տակ պահուող սրիկան կնոջս հետ միասին ասկէ չորս ամիս առաջ Պուրկազէն յունական շոգենաւ նստելով, Ամերիկա կամ Եգիպտոս երթալու նպատակաւ Բիրէա գացած է։ Հոս իր մէկ բարեկամին յարաբերութիւններուն նայելով, կը կարծեմ գիտնալ թէ Մեսրոպ Վարժապետեան սրիկան եւ զիս լքող կինս (Սրբուհի տէր Ղազարեան կամ Յովհաննէսեան) յանձնարարուած են Նիւ Եորք բնակող պ. Պետրոս Պաղտասարեանին։

Իմ անհամար բարիքներուս փոխարէն այս զզուելի վատութիւնը գործող կեղծ յեղափոխական Մեսրոպը ուր որ տեսնուի թուքով եւ թուքով պէտք է վարձատրուի ամէն ազգայինէ որ հայու զգացում կը կրէ. եւ կը յուսամ թէ դաշնակցական կոմիտէները անոր ձեռքի թուղթերը առնելով պիտի պատժեն ու արտաքսեն զինք։

ՄՇԵՑԻ ԳԱՍՊԱՐ Մհտ. ԱՌԱՔԷԼԵԱՆ
(կօշկակար)

13 մարտ 1906
Վառնա

ՄԻԱՄԵԱՅՆ ՀԱՅՈՒԵԿՑԻՈ

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ

1905 մարտ 6էն, մինչեւ 1906 մարտ 6

ՄՈՒՏՔ

	ֆր. սնդ.
Նախորդ տարեշրջանէն պատրաստ դրամ	338. 31'/2
Եկեղեցւոյ շրջափակին եւ երկաթեայ դուռին շինութեան համար հանգանակ.	226 29
Կալուածներէ	1323. 20
Վաւերացումներէ	42
Նուիրատուութիւններէ	41
Իւղագնէ	1313
Ամուսնկ. վկայագիրներէ	16
Մկրտութեան » »	118. 50
Տապանաքար դնելու հրամանագիրներէ	15. 40
Թաղման հասոյթներէ	547. 40
Պսակադրամի հասոյթներէ	834. 80
Ցատուկ պատարագներէ	166. 80
Բանկալէն	3980. 46
Հալաւի օրհնութիւններէ	334. 30
Աւազանի տուրքէ	374. 50
	9671.96'/2

ԵԼՔ

	ֆր. սնդ.
Եկեղեցւոյ շրջափակին եւ երկաթեայ դուռին շինութեան	845. 95
Կալուածական տուրք, վարժարանին շուրջը շինուած քարայատակին եւլն.	245. 45
Խորհրդարանի ծախս	178. 25
Եկեղեցւոյ ծախս	235. 90
Փիստոս Սրապեանի սընտուկին եւ աքսորեալ Արշակի Նպաստ	14. 65
Վճարուած ապահովագրողէք	80. 10
Եկեղեցւոյ վերաբերեալ զանազան իրեղէններ	25. 40
Եկեղեցւոյ կղմինտիրներուն, անձրեւի խողովակաց, նախագաւթին շինութեանց	660.20
Տիկն Պ. Ֆասուլիաճեանէ գնուած ձեռագործին եւ բոստի ծախս	63. 25
Եկեղեցւոյ համար գնուած վառարանին եւ խողովակ ներուն եւլն.	111·90
Քարտուղարի, ձայնաւորի, լուսարարի եւ ժամակոչի ամսաթոշակ	2879. 95
Հոգաբարձութեան	3398. 30
Զիթաւղի, մեղրամոմի, մոմագործի. մոմաթափի եւ սրարմաչէթի	850. 10
Հանգանակութենէն անգանձելի մնացած	5
Պատրաստ դրամ	77. 56'/2
	9671. 96'/2

Մանրութիւն.

Ներկայ հաշուեկշռի մասին դիտողութիւն ունեցող պատուարժան ազգայինք ըստ Ազգ. Սահմանադրութեան պարտին թուականէն մինչեւ 21 օր թաղական խորհրդարան դիմելով պէտք եղած բացատրութիւնն առնուլ։ Սոյն պայմանաժամէն ետքը ըլլալիք ոչ եւ է դիտողութիւն անլսելի կը մնայ։

Եկեղեցւոյ եւ խորհրդարանի ծախսն է, խունկ, քարիւղ, հանքածուխ, աղուխ, եկեղեցական անօթներու նորոգում, ընկալագրաց տպագրողէք, թուղթ, տետրակ, հեռագիր, նամակատարս եւլն.

Վասն ճշդութեան կստորագրենք ի դիմաց թաղական խորհրդոյ

Ատենադպիր Ատենապետ
Ն Գ. Բիւսանեան Խ. Ազնաւորեան

Վառնա 6 մարտ
1906

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Զէյթունի մէջ ժանտատենդ սկսած ըլլալով շատ մը զոհերէ զատ տեղւոյն զինուորական հրամանատարն ալ մեռած է։ Կառավարութիւնը Պոլիսէն գնդապետ բժիշկ մը և հազարապետ դեղագործ մը ղրկեր է, որպէսզի քաղաքին հիւանդները դարմանեն։ Ընթերցողը կրնայ հասկնալ թէ քաղաքի մը համար զինուորական բժիշկ և դեղագործ ղրկելով ինչ նպատակ կրնայ ունենալ թուրք կառավարութիւնը։

—Աղթամարի Կաթող. Տեղապահ

«Նրան եւ ո՛չ ոք կարող է հասկնալ»։

«Տուն եմ ուզում գնալ։ Բժիշկ, սիրելի՛ ընկեր, ուզում եմ դուն գնալ։ Այլ եւս չեմ կարող մնալ այստեղ»։

Նա մտածում էր մի ինչ որ բանի վրայ, եւ իմ խնդրանքը մնաց անպատասխան։

«Ատուած իմ.՝ ես սրունքներս չունիմ։ Ես սիրում եմ հեծեալ վէլոսիպէդ, գալել, վազել, բայց սրունքներս չ'կան։ Ես սովոր էի իմ տղուն պար ածել, եւ նա ուրախանում էր եւ ծիծաղում, իսկ հիմա . . . ։ Ո՞վ խլեց նրանց ինձանից—Ո՞վ հաւարձակուեց խլել նրանց . . . ։ Անէ՛ծք ձեզ բոլորիդ։ Էլ ինչի է ծառայում իմ տուն գնալը։ Եւ դեռ երեսուն տարու եմ . . . Անէ՛ծք ձեզ բոլորիդ»։

Ողբում, լաց էի լինում իմ սրունգների վրայ, իմ արագոցն, ուժեղ եւ կայտառ սրունգների վրայ, երբ,

«Լսի՛ր» ասաց բժիշկը նայելով մի կողմ, «ես երէկ տեսայ մի յիմար զինուորի, որը գալիս էր դէպի մեզ։ Թշնամիի մի զինուոր։ Նա դրեթէ բոլորովին մերկ էր, ծեծուած ճանկռթուած, եւ անօթի որպէս գազան։ Նրա մազերը ցրուած էին. ինչպէս մերն է։ Նա նմանում էր վայրենիի. նախնական մարդու կամ կապիկի։ Նա շարժում էր իրա թեւերը այս այն կողմը» ծամածռումներ անում, երգ ու, բացագանչումներ անում եւ ուզում կուեր։ Կերակրուեց նա եւ նորից ճանապարհգուեց դէպի բաց ամայութիւն։ Մենք ո՞ւր կարող էինք պահել նրան։ Նրանցից շատեր գիշեր ցորեկ թափառում են բլուրների արանքում, դէս դէն ամեն կողմ։ Նրանց համար ճանապարհը նշանակութիւն չ'ունի։ Ոչ նպատակ ունին եւ ոչ էլ հանգստանալու տեղ։ Բոլորն էլ ցնցոտիների մէջ չարաշուք ուրուականների են նման։ Նրանք երերցնում են իրենց թեւերը, պարում, ծիծաղում, բացագանչում եւ երգում երբ հանդիպում են մէկին։ Նրանք միմեանց հանդպելէս յաճախ կուում են եւ կամ միմեանց չը նկատելով անցնում գնում։ Ի՞նչ է նրանց ուտելիքը, հաւանօրէն ոչինչ եւ կամ գուցէ կերակրում են մեռած մարմիններով։ Նրանք անասունների, գայլերի եւ վայրի շների հետ բլուրների արանքում միշտ կռուի են բռնուում եւ ամբողջ գիշերով վնկվկում։ Նրանք շատ են սիրում կրակը, ժանաւանդ գիշեր ատեն։ Բաւական է որ դուն մի կրակ վառես եւ ահա տասը բոպէ չանցած նրանցից տասնեակներով, փոթորկից զարթնած թեւաւորների նման դողալով եւ քրթուրտալով քալիս քո շուրջը են հաւաքւում—այդ կտպկանման վայրենի մարդիկ։ Նրանք երբեմն զարնուում են սխալմամբ եւ երբեմն ալ նրպատակով, որովհետեւ իրանց անվերջ անհասկանալի եւ սարսափեցուցիչ խօսքերով ու պոռչտումներով լցնում են մարդու համբերութեան բաժակը. . . ։»

«Ուզում եմ տուն գնալ» գոչեցի ականջներս փակելով։

Սակայն նրա բերնից ահարկու խօսքեր շարունակում էին դուրս թափել, ինչպէս ցորենը աղօրիքից, եւ հարւածում իմ ուղեղը։

«Նրանք բազմաթիւ են։ Նրանցից հարիւրներով մեռնում, ոչնչանում են այն որոգայթների, թէլէ ցանցերի մէջ եւ ցցի վրայ, որոնք լարուած են ողջամիտ եւ խելացի մարդկանց համար միայն։ Նրանք մասնակից են լինում կանոնաւոր կռիւների եւ կռուում որպէս հերոսներ—բայց միշտ նախնական բիրտ կերպով եւ բոլորովին անվախ։ Նրանք առհասարակ յարձակուում են իրանց նման մարդկանց վրայ։ Համակրում ես նրանց։ Ներկայիս դեռ նոր եմ սկսում խենթանալ եւ հէնց դրա համար է, որ նստած քեզ հետ եմ խօսում։ Բայց հէնց որ զգացումներս բոլորովին ինձ կը թողնեն, պիտի գնամ բաց, ամայութիւն, պիտի կոչ անեմ գիշերային այն ուրուականներին. պիտի հաւաքեմ իմ շուրջը այն քաջերին։ Պիտի կազմեմ մի ահռելի բանակ եւ պիտի պատերազմ հրատարակեմ ընդդէմ ամբողջ աշխարհի։ Մենք խմբով ուրախ զուարթ միւզիքով եւ երգերով պիտի ժանենք քաղաքից քաղաք եւ գիւղ ց գիւղ։ Մեր ետեւից կարմիր լճակներ ենք թողնելու, որոնց մէջ ամեն ինչ պիտի պտոյտ տայ, երգէ, ծիծաղի եւ պարէ։ Ողջ պիտի մնան միայն մեզ միացողները։ Մեր բանակը հետզհետէ պիտի աճի եւ մաքրէ ամբողջ աշխարհը։ Ո՞վ է ասում, որ չը պէտք է սպանել, այրել կամ կողոպտել . . . ։

Նա այժմ պղաւում էր այդ խենդ բժիշկը։ Նրա ձայնից կարծես արթնցած բոլոր մեր շուրջը գտնուողների թմբրած ցաւերը, նրանց, որոնց, ոմանց կրծքերն ու կոզերն էին պատռուած բացուած, ոմանց աչքերը դուրս պոկուած, սրունքները կտրուած, եւ ընդարձակ սրահը լեցուեց սիրտ կտրատող տնքումներով ու հառաչներով։ Ամեն կողմից գունատ դեղնած, սպառուած գէմքեր մեզ դառան, ոմանք առանց աչքի, իսկ ոմանք այն աստիճան սարսափելի այլանդակուած որ կարծես դժոխքից լինէին վերադարձած։ Մինչդեռ նրանք տնքալով մեզ էին մտիկ տալիս, իսկ բժիշկը թեւերը պարզած անդադար ոսնեղօրէն պղաւում մի տձեւ շուագ բարձրանալով երկրի տակից, գաղտագողի նայում էր բաց գոնից ներս։

(Շարունակելի)

պահ Տէր Յովսէփ եպիսկոպոս մերժեր է քահանայ ձեռնադրել մէկ քանի մարդիկ, որոնք իբրեւ ընծայացուներ Ալաշկերտէն ղրկուեր են, բայց եպիսկոպոսը քննելով տեսեր է թէ անոնք պարզ ընթերցանութիւն իսկ ընելու անկարողներ են։ Գովելի է Տ. Յովսէփ եպիսկոպոսի այս վարմունքը և փափաքելի է որ աւելի խիստ գտնուի, ու պարզ կարդալ գիտցողներ կամ տիրացուներ ևս չը ձեռնադրէ, այլ պահանջէ նաեւ ուրիշ կարեւոր հմտութիւններ, մանաւանդ նկարագիր և բարի վարք։

—Պուրկազի Տէր Գէորգ քհն. Դէորգեանը մեկնած ըլլալով, տեղւոյն Թազ. Խորհուրդը Զատկական տոներէն առաջ քահանայ մը խնդրած է Պատրիարքարանէն։

ՀԱՅԱՏԻՍԱՆ

ԹԻՒՐՔԻԱ

Լոմատա թէճէմիւ իտէն պէյ-նէլմիլէլ բոսթա գոնկրէսինտէ թիւրք մուրախասլարը տախ պուլընաճագ։ Թիւրքիա տախիլինտէ էճնէպի բոսթախանէլէր թէէսիսինէ գարշը գոնկրէտէ բրոթէսթ իթմէք իչիւն Պապը Ալի քէնտի մուրախասլարընա թալիմաթ վէրմիշ տիր։

—Պուլկար հիւքիւմէթի «Գըրմըզը սէնէնին նիհայէթի» խոմի իլէ պիր գըրմըզը քիթապ նէշր իտէրէք, իքի սէնէտէն պէրու Մաքէթոնիատա Թիւրքլէր, Ռումլար, Արնաւուտլար վէ Սըրպլար թարաֆընտան գաթլ օլընան ատամլարը գաթիլլէրինին իսիմլէրինի տէրճ իթմիշ տիր։ Պապը Ալի տախի Պուլկար ասըլարը իխթիլալ գալտըրուպտէ թիւրքլէրէ վէրտիքլէրի զարարլարը վէ էօլտիւրտիւքլէրի ատամլարը ըն մըզտարը պիր գաչ գաթ տանա գիյատէ օլտըղընը կէօսթէրմիշ իմիշ։

—Մանասթիր վիլայէթինին Տէպրէ գաղասը տախիլինտէ 9 քիշիլիք պիր չէթա պիր պէօլիւկ ասքէրլէ 9 սաաթ չիտտէթլէ վուրուշմուշ վէ չէթա մահվ օլմա չ, ասքէրլէրտէն տախի պիրի էօլմիւշ վէ 4 քիշի եարէլէնմիշ օլտըղը Սթանպօլտան պիլտիրիլիյօր։

—Մինլիք ճիվարընտա Սանտալքի նամ վօյվոտանըն գոմանտասը ալթընտա տօլաչան 60 քիշիլիկ պիր պուլկար չէթասը իւղէրինէ 3 ատէտ թօբլարլէ ասքէր կէօնտէրիլմիշ վէ չէթա տաղըտըլմըշ օլտըղը քէզա Սթանպօլտան պիլտիրիլիյօր։

—Սթանպօլը չէհիր էմինի, եախօտ պէլէտիյէ ըէյիսի Ըտվան բաշա դաթլ օլընմըշ տըր։ գաթիլ գաչմըշ։ Իշպու ճինայէթին չախսի խուսուսէթտէն իլէրի կէլտիկի ըէվայէթ օլընիյօր։

—Ագըպէ մէսէլէսինտէն տօլայը Ինկիլթէրա վէ Թիւրքիա պէյնինտէ կէրկինլիք աղըր պիր հալ քէսպ իտէյօր։ Ինկիլթէրա Ագըպէ մէվգըսը Մըսըրա այիտ օլտըղընը իտտաա իտէրէք, Թիւրք ասքէրինին չէքիլմէսի իչիւն Պապը Ալիյէ պիր նօթա վէրմիշ տիր։ Սուլթան տախի Ագըպէնին Թիւրքիայա այիտ պուլընտըղընը տէսթ ու պէյանլէ, ասքէրինի օրատան կէրի չէքէմէյէճէկինի ինկիլիզ էլչիսինէ պիլտիրմիշ տիր։

Պու սէպէպլէ Ինկիլթէրա պիր ճէսիմ տոնանմա իլէ իզմիր էօնիւնտէ նիւմայիշ եաբմագ նիյէթինտէ օլտըղը Լոնտրատան պիլտիրիլիյօր։

—Սթանպօլտան Բիւպիրէր Բրէս Ինկիլիզ կազէթասընա իշար օլընաբղընա նազարէն, Սուլթան պիր գաչ կիւնտէն պէրու թէքրար խասթալանմըշ վէ պու սէպէպլէ Եըլտըզտա թէլաշ հիւքմ իտէր իմիշ։

Շու հէրիֆ սէնէտէ գըրդ տէֆա խասթա օլաճաղընա, պիր տէֆա էօլիւր իսէ տահա գօլայ վէ տահա խահըրլը օլմա՞զմը։

—Սթանպօլ 13 մարտ— Էհալիտէ չայի օլտըղը իւզրէ, թէշրիֆաթը խարիճիէ մուավինի Ապտիւլ-Ռիզագ պէյ իլէ Սկիւտար զօմանտանը Շամիլ բաշանըն թէշվիգի իլէ Ռըտվան բաշա գաթլ օլընմըշ ըմըշ։ Գաթիլլէր պէշ քիւրտ օլուպ, տէրտէսթ օլընմըշլար տըր։

ԱՃԷՄԻՍՏԱՆ ՎԷ ԹԻՒՐՔԻԱ

Շու իքի տէվլէթ պէյնինտէ պու կիւնքի սինօր մէսէլէսի 60 սէնէլիք պիր մէսէլէ տիր։ Թանա Սթանպօլտան եաղըլտըղընա պինաէն, մահէլի մէղքիւրէ կէօնտէրիլէն թիւրք գօմիսիօնըն թահգիգաթ իճրասընտան սոնրա վէրտիկի բաբօրթա նազարէն, միւնազալը օլան արազիլէրտէ սաքին պուլընան էհալի Շիա օլմայուպ Սիւննի Մէղհէպինտէն օլտըղընտան մաատա՝ թիւրք հիւքիւմէթինէ վէրկի էօտէրլէր իմիշ։ Պու ճիհէթի թիւրքլէր պիր գավի տէլիլ ատտ իտէյօրլար։ Աճէմ հիւքիւմէթի իսէ՝ էն էվվէլ թիւրք ասքէրի կէրի չէքիլմէտիքճէ հիչ պիր թահդիգաթա էհէմմիյէթ վէրմէյէճէկինի պէյանլէ, հէր հալտէ թիւրքլէրին չէքիլմէսինի թալէպ իտէյօր։

ՏԱԽԻԼԻԼ

Վարնայա եաղըն պուլընան Տէվնէ կէօլիւն պիր գանալ իլէ տէնիզէ պիրլէշտիրիլմէսի իչիւն Սօպրանիէ 1,360,000 մէսարիֆ թախսիս իթտի վէ Բրէնս պանքատէ թաստիգ էյլէտի։

—Սօֆիայա եաղըն Վիթօշ տաղը էթէյինտէ պիր ալթուն մատէնի պուլընտըղը պուլկար կազէթալարը եազիյօրլար։

—Թիճարէթ նազիրը տօք. Քինատիյէֆ էլեէվմ Բարիստէ պուլընուպ «Պանգ տը Բարի» վէ «Գրէտի Լիոնէ» պանգալարըն տիրէքթօրլարը իլէ կէօրիշմէքտէ տիր։ Պազը կազէթաճըլարըն իշարը իւզրէ, Պուլկարիա 500 միլիոն ֆր. եէնի պիր իսթիդրազ իթմէք ֆիքրինտէ օլուպ, էկէր մուվաֆագ օլուր իսէ՝ պիւթիւն էսկի պօրճլարը թէմիզլէյուպ, պիր գալէմ պօրճ իթմիշ օլաճագ, վէ արթան 100—150 միլիոն ֆրանգը տիկէր իգթիզալարա թախսիս իտէճէք իմիշ։

ՌՈՒՍԻԱ

Տումանըն ինթիխապլարը պիւթիւն Ռուսիատա մարտ 6 տա իճրա օլընը։ հիւքիւմէթ ըէք տըզգաթը տավրանուպ, ինթիխապ մահէլլէրինտէ ասքէր վէ բօլիս պէքլէթմիշ օլտըղը սայէտէ հիչ պիր գարըշրգըզ վուգու պուլմամըշ տըր։ Էհալինին պիր դըսմը վէ պաշլըճա սոսիալիսթլէր հիւքիւմէթ թէզիիգ իտէյօր տէյուպ ըէյ աթմամըշլար։

ՄԱՐՕՔ ՄԷՍԷԼԷՍԻ

Ալճէզիրաս գոնֆէրանսընտա Մարոք բօլիս թէշքիլի վաղիֆէսի վէ սէլահիյէթի խուսուսընտա Ալման վէ Ֆրանսըզ մուբախասլարը պէյնինտէքի միւնազաա Ֆրանսըզլարըն լէհինտէ հալլ օլընմըշ տըր։ Եանի եէրլի բօլիսլէր ֆըրանսըզ վէ սպանեօլ զապիթլէրին մայէթինտէ պուլընաճագլար։ Պանգա խուսուսընտա տախի Ֆրանսանըն տահա զիյատէ սէլահիյէթլէրի վէ հագլարը թանըլմըշ օլմալէ, Ալմանլար պիր նէվ մաղլուպիյէթէ տիւշար օլտուլար, վէ Ֆրանսըզլար ինկիլթէրանըն մուավէնէթի իլէ զալէպէ չալտըլար։

ՄԻԹԷՆԷՎԻԼ

Աւստրիա իմբէրաթօրը Ֆրանց Եօզէֆին աղըր խասթալըղը վէ վէֆաթը Բարիս Պէրլին վէ Լոնտրատա շայի օլմուշ, պու պապտա Վիէննայա թէլէկրաֆլար վէրիլմիշ, վէ նիհայէթ մէղքիւր շայեանընը ասըլ ու էսասը օլմատըղը ըէսմէն պիլտիրիլմիշ տիր։

—Իթթիֆագը Միւռէլլէսէտէն [երբեակ զինակցութիւն) Իթալիանընը այրըլաճաղընա տայիր էվրոբա կազէթալարը սիւթիւնլէր տօլտուրմագտա տըրլար։ Պու խուսուստա ըէսմի պիր մալիւմաթ եօգ իսէտէ, Ալման վէ Իթալիա կազէթալարը պիրպիրլէրինէ գարշը աղըր լիսան խթիմալ իթմէքտէ տիրլէր։ Իթալիա մուրախասլարընը Ալճէզիրաստա Ֆրանսանըն թարաֆընը թութմալարը Ալմանլարը բէք գըզդըրմըշ տըր։

—Ալմանիանըն եէնի նուֆուս ճէտվէլինտէ կէօրիւնտիկի իւզրէ, պիւթիւն Ալմանիատա 60 միլիոն վէ 500,000 էհալի մէվճուտ ըմրշ. Պունտան 37 միլիոն վէ 500,000ի Բրուիատա։

—Բրիտանիա իմբէրաթօրլըղընը, եանի պիւթիւն ինկիլիզ թապաալարընը մըգտարը՝ սոնտէֆա նէշր օլընան նուֆուս տէֆթէրինէ պինաէն՝ 398,491,741 քիշի տիր. պու մըգտարտան 41,609,091 նուֆուսը ասըլ Բրիտանիա ատալարընտա օլան ասըլ ինկիլիզլէր տիր։

«ՆՈՐ—ԴԱՐ»

Օրաթերթ Քաղաքական, գրական

Բաժնեգինը արտասահմանի համար տարեկան 40 ֆր. վեցամսեայ 25 ֆր.
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՆՈՐ-ԴԱՐ»
(Կովկաս) ԹԻՖԼԻՍ

«ՄՇԱԿ»

Օրաթերթ քաղաքական, գրական

Բաժնեգինը՝ Եւրոպայի համար 30 ֆր. Ամերիկայի համար 6 տոլար, Պարսկաստանի եւ Ռուսաստանի համար 10 ռուպլի տարեկան։
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ»ի
(Կովկաս) ԹԻՖԼԻՍ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

Գրական, հասարակական, քաղաքական

Օրաթերթ

Բաժանորդագին օտար երկիրներ՝ 35 ֆր.
Հասցէ՝ Խմբագրութիւն «ԱՐՇԱԼՈՅՍ» ի
(Կովկաս) ԹԻՖԼԻՍ

ԸՆՏԻՐ ՔԱՑԱԽ

Զուտ խաղողէ պատրաստուած բնական քացախի Նորահաստատ մեր մթերանոցը առթի կընծայէ յարգոյ հասարակութեան որ ասկէ յետոյ զերծ մընայ խարդախեալ այլ եւ այլ գեղերով պատրաստուած կեղծ քացախներու վընասներէն։ Մեր քացախին անարատութիւնը եւ ազդուութիւնը ամեն երաշխիք կընծայէ իր առողջութեան նախանձախնդիր յաճախորդին, որ անգամ մը փորձելով արդէն հաստատած պիտի ըլլայ գերազանցութիւնը։

Դուրսէն մեծաքանակ յանձնարարութիւնք փութով կը գործադրուին ի հարկին նմոյշ ղրկելով։

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱԿ ԴԱՍԱՊԵԱՆ

Դ. թաղ փողոց Գալոնի թիւ 65 ՎԱՌՆԱ

Одговорникъ А. Курбетиянъ
печатат а Д. Тодоровъ и С-ие—Варна